

գեն բաւական է եղել, որ «Մամուլ» բաժնի խմբագիրը (Մշակ № 81) նորից իւր երեակայութեան դօռ տայ, «Մշակ»-ի կարծիքով «Նըեմիա եպիսկոպոսի յիշատակը» մեզ հանդսառութիւն չի տալիս Բայց այդ նորա այն զրպարտութիւններից մէկն է, որ նա տասնեակ տարիներ շարունակ գործ է գրել «աստուածաբաններին» հայհոյելու առիթ գտնելու և իւր «ազատամառութիւնը» հոչակելու համար Այժմ էլ հարկաւոր է այդ՝ դաշնակցականների աշքում «կղերական» շերեալու համար:

Թող նա մի տող ցոյց տայ մեր գրած, որ ստուեր ձգելու նպատակ ունենաց հանդուցեալ Երեմիա կամ Արիստակէս եպիսկոպոսների յիշատակի վերայ: Չենք ուղում ասել, որ այդ եպիսկոպոսների ըոլոր վարմունքների և գործողութիւնների տակ պատրաստ ենք երկու ձեռքով ստորագրել, այլ թէ առիթ չենք ունեցել այդ մասին կարծիք յայտնելու: Բայց կարելի՝ է տատասկից խաղող քաղել: Մի ժամանակ էլ նրանց սիւն համարուած Լէօն էր առանց կարմրելու առտուածաբանների գլմին փողոցային լուտանքներ թափում տգէտ քահանաների ձեռնադրութեան համար, կարծելով, որ դորանով իւր անալի «կերակնօրեայ զրոյցները» համ կստանան: Ի՞նչ մեզաւոր էին աստուածաբանները տգէտ քահանաների ձեռնադրութեան խնդրում: Մի կաթիլ խիզճ ունեցէք եթէ զոնէ մի կաթիլ խիզճ ունենայիք, մեր մամուլը այդ քան ընկած չէր լինիլ և դուք ընդունակութիւն կունենայիք իւրզութիւններն իրենց իսկական յատկութիւններով և գոյներով տեսնելու:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՆԵԿՐՈՍՈՎ, ԵՒ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ:

(Պատկեր անցեալի)

Օդտուելով յայտնի բժիշկ բելոգուսկի յիշողութիւններով, «СЛОВО» թերթը վերարտագրում է հետաքրքիր մի դէպք, որի մէջ դժաւոր դործող անձինք եղել են Ն. Ա. Նեկրասով և գրաֆ Առիս-Մելիքով,

1841 թ. գեկտեմբերին, ծննդեան վող առաւօտեան առանամանիքով, ցըտից թռչկոտալով Նիկոլայևսկի փողոցով

(այն ժամանակ կոչուում էր «Գրյզնայ») գնում էին երկու երեսաւարդ, պետք էր բռուզ զցիների համար վերին աստիճանի տարօրինակ զգեստով, մէկը—վենեցիական գօֆի, միւսը խոպանական զգեստով: Նա որ խոպանական գրանդի զգեստ ունէր, նման էր աւելի հայի քան խոպանացու, մինչդեռ վենեցիական գոֆը ու նէր ուղղակի ուռուսական պարզ պատկեր:

Ի՞նչ ձեսվ, սակայն, կարող էին երկուն գալ դեկտեմբերի սառնամաներին Պետերբուրգի փողոցի վերայ... խոպանիայի գրանդը և վենեցիայի գոֆը:

Ահա թէ ի՞նչ ձետի:

Երիտասարդ ընկերները, նիկոլայեւսկի փողոցի վերայ միասին վարձած ունենալով աղքատիկ մի սենեակ, մտադրուեցին ծննդեան տօնին ուրախութիւն անել... և գնալ «գիմակաւուրուած» ծանօթ աստիճանաւորի ընտանիքը, որ ապրում էր իզմայելեան գնակի մէջ...: Յաւօք որտի նոքա իրենց ընկերական համեստ գումարի հաշիւը լաւ չէին տեսել, և գլխաւոր ֆոնդը վճարել էին կառքի վարձելուն, իսկ ի՞նչ վերաբերում է իրենց գիմակաղգեստներին, որ վարձու էին վերցրել ի՞նչ որ ծխախոտի խանութից, դոցա համար նոքա ոչինչ չէին վճարել, թողնելով տիրոջը իրեւ գթաւ իրենց սեպհական զգեստները: Աստիճանաւորի երեկոյթում բաւականաշափ պարելով և հիւրատիրուելով, երիտասարդ ընկերները ուրախութիւնից այցելեցին ուրիշ մի ծանօթի ևս, որտեղից գուրս գալով, իրենց խիստ գեղեցիկ զգեստներով ընկան ոտոնամաների մէջ, բայց առանց կոպէկի: Բացի այդ չտաքացրուած սենեակում աւելի տաք չէր քան փողոցում, և որպէսզի, գոնեաւ իրենց գիմակաղգեստներում միքեւ տաքանան, ոտիպուած եղան ծայրայեղ միջոցի դիմել—վառարանը տաքացնելու համար զոհել իրենց միակ աթոռը, իսկ կրակ անելու համար գիւանի միջեց հանել կեղեաթելերը (խօչածո): Բայց հէնց որ անցաւ ցուրտը, առաջ եկաւ քաղցր: Նոր գթբաղտութիւն: Ուղարկուեցան նամակներ ծանօթներին, սկսուեցին գիպլոմատեական բանակցութիւններ Խանութպանի հետ, որը վերջ ի վերջոյ ապառիկ բաց թողեց մի բաժին գոնդող (Студень): Գոնդողը եղբայրաբար բաժանեցին իրենց մէջ վենեցիայի գոֆը և խոպանիայի դրանդը—բայց, աւազ, ծանօթներին ուղարկուած նամակներից ոչ մէկը յաջողութիւն չունեցաւ: առների առթիւ ոչ ոքի մօտ աւելուդ կոպէկ չէր դժուուել: Կրութիւնը ծիծաղաշարժից գարձաւ եղեռնական: Երկու ընկերները, մարուած վառարանի առաջ, յատակի վրայ նստել էին տխուր մտածողութեան մէջ:

— Նիկոլայ Ալեքսէնդրի, ի՞նչ ալէտք է անենք մենք», գարձաւ իսպանական գրանդը վենեցիայի գօժին:

— Զգիտեմ, Միքայել Տարիելովիչ, — հրաց հանեց գօժը, — գուցէ նարիշկինը կազատէ. (Նարիշկինը նորանց հետ ապրող երրորդ ընկերն էր):

Եւ նարիշկինը խոկապէս ազատեց ու փոլ էլ գտաւ, սակայն նա եկաւ միայն երեկոյեան, երբ, կարծում էին, թէ վրկութեան ամէն մի յոյս կորած էր: Բայց գորա փոխարէն, երբ կրիտիքական ըուլէն յաջողութեամբ անցաւ, կարող էք երևակայել, որպան անգարում ծիծաղ շարժեց այս եզեռնածիծաղաշարժ գէպքը նրանց մէջ:

Ես մինչև այժմ յայտնեցի միայն նարիշկինի աղգանունը. ի նկատի ունենալով, որ միւս երկուսին գուցէ ընթերցողն ինքը կգուշակէ անունների հիման վերայ: Նիկոլայ Ալեքսէնդրի նեկարասով և Միխայիլ Տարիելովիչ Լորիս-Մելիքով... Ո՞վ կարող էր մտածել, որ վենեցիայի գօժի գիմակի տակ ծածկուած էր ապագայ մեծ բանաստեղծը, իսկ իսպանական գրանտի վերնազգեստով պատմական մի խոշոր գէմք, որ գրաֆի տիտղոս ստացաւ իւր գործունէութեան համար:

Թարգմ. Արակ Վարդապետ.

Գնացէի մէջ բաւրն. — Մինչև այժմ ամենալաւ գնացքներում ամեն յարմարութիւն կար բացի թատրոնից. սակայն վերջերս այդ պակասութեան վրայ էլ են ուշ գարձրել: Նորերո պարիզից մեկնող մի գնացքի կցել են նաև թատրոն-վագոն Այդ թատրոնում եղել է 80 տեղ, բեմ, տոմսակ վաճառելու գրամարկը, ամեն բան իւր կարգով: Ներկայացրել են 3 պիես Դարուվայր տեղերում գերասանները դժուարութեամբ են հաւասարակշռութիւն պահպանել, իսկ տուններներում՝ նրանց ձայնը հեշտութեամբ չի լսուել: (Տե՛ս էլ է 12):

Աշխատութիւնը եւ տաղանդը արուեստի վերաբերմամբ. — Քանդակագործ Ռոդինն այս բանի մասին ասում է. «Եմ գործերը յաճախ ըուռն ոգեստութեան արդիւնք են են համարում, սակայն աւելի շուտ ես մեղմ և ծանր տեմպերամենտ ունիմ ես ոչ թէ երազող եմ, այլ՝ մաթիմաթիկոս: Խմ գործերը գեղեցիկ են, որովհետեւ երկըաշախական ճշտութիւն ունին. Ես չեմ ժխտում, որ նոցա մէջ կայ ոգեստութիւն, բայց այդ այն պատճառով է, որ նոքա ճշմարտութիւն են արտայայտում:

Այդ ոգեսրութիւնն իմ մէջ չէ, այլ ընութեան մէջ։ Արուեստը պահանջում է տոկունութիւն և համբերութիւն, որոնց մասին մարդկանց մեծամասնութիւնը հասկացողութիւն չունի։ այժմ նոքա կամենում են շուտով առաջ գնալ։ Ոչ ոք չի ուզում հաւատալ, որ ամեն քան արհեստ է։ աւելի շուտ հաւատում են անսովոր և դերմարդկային գօրութեան քան թէ այն քանին, որ արհեստը արսուեստի հիմքն է։ (Руск. Вѣд. № 12)

Գրեգրի թօնամիները.—Օրէցօր գրքերը շատանում են ահագին քանակութեամբ, ըայց գրանց թիւը աննշան է համեմատած ոչնչացածների հետ։ Թէ հին և թէ նոր աշխարհներում եղել են մեծ քանակութեամբ գրքեր ոչնչացնողներ։ Պատմում են, որ ըարելացոց նաբունասար արքան փառքից կուրացած իւր պետութեան մէջ եղած բոլոր գրքերը ոչնչացնել է տալիս, որպէսզի պատմութիւնն իրանով սկսուի։ Նոյնն արել է նաև չենաց Զէ-Խուանդ-թէ կայսրը։ Աւելի նոր ժամանակներում Գրեգոր Մեծ պապը ցանկանալով ժողովրդին կապել քրիստոնեական դրականութեան հետ՝ այրել է տալիս հին աշխարհի գրականութիւնը պարունակող մի մատենագարան։ Ահագին քանակութեամբ գրքեր են այրել տալիս և բիւզանգիայի Աւոն կայսրը, Կարգինալ Քսեմենէսը և Մաքսիմելիան Կայսրը։ Օքսֆորդի գրադարանը ոչնչացել է Կրոմուէլի ժամանակ։ Պատկերամարտներից մեկը ահագին քանակութեամբ արժէքաւոր ձեռագրեր է այրել։ Կ. Պոլսի առման ժամանակ Մուհամէդ Բ. այրել է տուել 120000-ի չափ ձեռագրեր։ Նորագոյն ժամանակներում յատնի է Շարատբուրգի հարուստ գրադարանի կարուստը, որ տեղի ունեցաւ 1870 թ. քաղաքի պաշարման ժամանակ։

(Русск. Вѣд. № 25).

Նախապատմական կենդանիները.—Յայտնի է, որ հազարաւոր տարիներ առաջ երկրագնակի վրայ ապրել են հոկայակազմ կենդանիներ։ Թէկ այժմ դրանք գոյութիւն չունին, ըայց գիտնականերն ի նկատի ունենալով նոցա մնացորդները՝ վերականգնել են նրանց ձեւը։ Ամենից աւելի հրէշտառը ձերով աչքի են ընկնում մողեսաձենները՝ այժմեան մողեսների և կոկորդիլոսների նախաղդները, որոնք մեծ զարգացման են հասել իւրեանց շրջանում։ Նախապատմական ժամանակներում երկրիսերէսին ապրել են միայն պաղարիսն կենդանիներ, որովհետեւ երկրի ամբողջ մակերեսոյթը տաք կիմայ է ունեցել, և կենդանին ջերմութիւն ստացել է դրսից։ Իսկ երբ կլիման սառել է, հոկայ կենդանիները չեն յարմարուել դրան և անհետացել են,

որովհետեւ որքան մեծ է մարմինը, այնքան էլ մեծ է ջերմութեան կորուստը:

Նախապատմական հոկայամարմին կենդանիներիցն է դիպլոմիր, որ պատկանում է մողեռաձևներին (գինողաւր), որտեղ վիթխարի սողուններ էին և ունէին այժմեան կենդանական թագաւորութեան մի քանի դատ խմբերի՝ մողեռների, կոկորդելուների, կաթնհաւունների և թռչունների յատկութիւնները: Դիպլոմիկի երկարութիւնն էր 9 սաժէն, որի կէսը երկայն և ուժեղ ազին էր, որ ծառայել է զբում լողալու և հաւանականաբար ցամաքի վրայ պաշտպանուելու համար: Կերակրուել է քուսեղէնով, շրջել է երկու յետին երկայն ոտների և պոչի օգնութեամբ: Տանըութիւնը եղել է 1500 փութ:

Անհետացած հոկայ կենդանիներիցն է և ալլոգաւրը 5 սաժէն երկայնութեամբ և աւելի զանդուածական մարմնով: Սրա կմաղքը նիւթեորկի թանդարանումն է, իւնից աւելի մէծ, բայց անպաշտպան բրոնտոպաւրի կմաղքի վրա նրան պատռուելու գիրըում: Այս հրեշի դլխի երկարութիւնն եղէլ է $1\frac{1}{2}$ արշին, ունեցել է զարհուրելի ատամներ:

Աւելի փոքր, բայց տարօրինակ ձև ունի նեոզաւրը. երկայնութիւնն է $1\frac{1}{2}$ սաժ. բարձրութիւնը $5/4$ սաժ. ունեցել է ուժեղ ծնօտ, ատամներ և 4 վերշոկաչափ ճիրաններ: Այս երկակենցաղի կոլոր դուրս ընկած մէջքի վրայ տարածւում է լողաթաղանթը. ոս ծակծուած է ամսւը մաշկով, որի վրայ կան 30-ի չափ փշածե ուկրներ:

Վերջապէս այլանդակ կենդանիների շարքին են պատկանում նաև ցերատոպիդները կամ եղջիւթաւոր սողունները, որոնք միւս մողեռաձևներից տարբերում են նորանով, որ սրանց չորս վերջաւորութիւնն էլ հաւասարաչափ են զարգացած:

Եղենեմլի, № 49-50)

Ն Ա. Մ Ա. Կ

«Արարատ» ամսագրի յարգոյ խմբագրութեան

Ինչպէս արդէն յայտնի է հասարակութեան, ներկայ թուականին լքացաւ Արժ. Եղնիկ ար քահ. Երջնկեանի ուսուցչական գործունէութեան 35 ամեակը:

Նրա յարգողները ի պատիւ նրա բազմամեայ մանկավարժական ժառայութեան, որոշեցին, յանուն յօթելեանի, աջակցել նրա ձեռնարկած նոր օդուաւէտ գործին, այն է՝ «Հովիւ»